



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1, Հեռ. 060-75-77-87
Էլ. փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 01-Ա

ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի
6-րդ կետի պահանջներով,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել Թալին համայնքի ավագանու 2024 թվականի առաջին նստաշրջանի առաջին նիստի օրակարգը.

1) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-007-0038-0006 ծածկագրով անշարժ գույքը <<Ակունքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

2) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-069-0020-0036 ծածկագրով անշարժ գույքը <<Մաստարայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

3) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-036-0020-0002 ծածկագրով անշարժ գույքը <<Դավթաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

4) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-057-0044-0022 ծածկագրով անշարժ գույքը <<Կաթնաղբյուրի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

5) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-035-0025-0031 ծածկագրով անշարժ գույքը <<Դաշտադեմի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

6) Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

7) Թալին համայնքի Մաստարա բնակավայրում գտնվող հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:

8) Թալին համայնքի Լուսակն բնակավայրում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները հաստատելու մասին:

9) 2023 թվականին Թալին համայնքում իրականացված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը հաստատելու մասին:

10) Թալին համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:

11) Համայնքի սեփականություն հանդիսացող շարժական գույքը աճուրդ-վաճառքով օտարելու մասին:

- 12) ՀՀ ազգային արխիվին անհատույց օգտագործմամբ տարածք տրամադրելու մասին:
 - 13) Համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:
 - 14) Պետական սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրելու մասին:
 - 15) ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքում 2024թվականի համար խմելու և կենցաղային նպատակով օգտագործվող ջրի տեղական վճար սահմանելու և դրույքաչափերը հաստատելու մասին:
 - 16) ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի 2024 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին:
 - 17) Թալին համայնքի 2023թ. տարեկան բյուջեի եկամուտների և ծախսերի կատարողականի մասին:
 - 18) Ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման համար «Մանուշակ 2000» ՍՊԸ նկերությանը նախնական համաձայնություն տալու մասին:
 - 19) ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի օրը սահմանելու մասին:
2. Մույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-17

Դեմ-0

Ձեռնպահ-0

- 1.Տավրոս Սափեյան
- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Սևակ Միմոնյան
- 6.Գեղամ Ղազարյան
- 7.Սերգե Մկրտչյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան
- 10.Մկրտչյան Էմին
- 11.Արմեն Ծառուկյան
- 12.Նարեկ Գրիգորյան
- 13.Վահե Եղիազարյան
- 14.Սարգիս Մուրադյան
- 15.Ղուկաս Հակոբյան
- 16.Դավիթ Մանուկյան
- 17.Գագիկ Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱԿԱՐ



(Handwritten signature in blue ink)

Տ. ՄԱՓԵՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ. փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 02-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-007-0038-0006 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ <<ԱԿՈՒՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին
մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-007-0038-0006 ծածկագրով 0,5942 հա
հողամասը և հողամասի վրա գտնվող 02-007-0038-0006-001 ծածկագրով շինությունը
(մանկապարտեզը) անորոշ ժամանակով անհատույց օգտագործման տրամադրել Թալին
համայնքի <<Ակունքի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. Տավրոս Սափեյան
2. Բաբկեն Պողոսյան
3. Արման Կարապետյան
4. Սարգիս Գրիգորյան
5. Սևակ Միմոնյան
6. Գեղամ Ղազարյան
7. Սերգե Մկրտչյան
8. Ավետիս Մինասյան
9. Հարություն Կարապետյան
10. Մկրտչյան Էմին
11. Արմեն Ծառուկյան
12. Նարեկ Գրիգորյան
13. Արմեն Գրիգորյան
14. Վահե Եղիազարյան
15. Սարգիս Մուրադյան
16. Ղուկաս Հակոբյան
17. Դավիթ Մանուկյան
18. Գագիկ Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

S. ՍԱՓԵՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ. փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 03-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-069-0020-0036 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ <<ՄԱՍՏԱՐԱՅԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին
մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-069-0020-0036 ծածկագրով 0,203 հա
հողամասը և հողամասի վրա գտնվող 02-069-0020-0036-001 ծածկագրով շինությունը
(մանկապարտեզը) անորոշ ժամանակով անհատույց օգտագործման տրամադրել Թալին
համայնքի <<Մաստարայի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18

Դեմ-0

Ձեռնպահ-0

1. Տավրոս Սափեյան
2. Բարկեն Պողոսյան
3. Արման Կարապետյան
4. Սարգիս Գրիգորյան
5. Սևակ Միմոնյան
6. Գեղամ Ղազարյան
7. Սերգե Մկրտչյան
8. Ավետիս Մինասյան
9. Հարություն Կարապետյան
10. Մկրտչյան Էմին
11. Արմեն Ծառուկյան
12. Նարեկ Գրիգորյան
13. Արմեն Գրիգորյան
14. Վահե Եղիազարյան
15. Սարգիս Մուրադյան
16. Ղուկաս Հակոբյան
17. Դավիթ Մանուկյան
18. Գագիկ Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

S. ՍԱՓԵՅԱՆ

թ. Թալին

28 փետրվարի 2024թ.





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գալի -1, Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 04-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-036-0020-0002 ԾԱԾԿԱԳՐՈՎ
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ <<ԴԱՎԹԱՇԵՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին
մասի 21-րդ կետով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-036-0020-0002 ծածկագրով 0,5032 հա
հողամասը և հողամասի վրա գտնվող 02-036-0020-0002-001-000 ծածկագրով շինությունը
(մանկապարտեզը) անորոշ ժամանակով անհատույց օգտագործման տրամադրել Թալին
համայնքի <<Դավթաշենի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18

Դեմ-0

Ձեռնպահ-0

- 1.Տավրոս Սափեյան
- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Սևակ Սիմոնյան
- 6.Գեղամ Ղազարյան
- 7.Սերգե Մկրտչյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան
- 10.Մկրտչյան Էմին
- 11.Արմեն Ծառուկյան
- 12.Նարեկ Գրիգորյան
- 13.Արմեն Գրիգորյան
- 14.Վահե Եղիազարյան
- 15.Սարգիս Մուրադյան
- 16.Ղուկաս Հակոբյան
- 17.Դավիթ Մանուկյան
- 18.Գագիկ Ավետիսյան



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Տ. ՄԱՓԵՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 05-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՄԱՑՈՂ 02-057-0044-0022
ՕԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ <<ԿԱԹՆԱՂԲՅՈՒՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին
մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-057-0044-0022 ծածկագրով 0,4252 հա
հողամասը և հողամասի վրա գտնվող 02-057-0044-0022-002 և 02-057-0044-0022-001
ծածկագրերով շինությունները (կաթսայատունը և մանկապարտեզը) անորոշ ժամանակով
անհատույց օգտագործման տրամադրել Թալին համայնքի <<Կաթնաղբյուրի
մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18

Դեմ-0

Ձեռնպահ-0

- 1.Տավրոս Սափեյան
- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Սևակ Սիմոնյան
- 6.Գեղամ Ղազարյան
- 7.Սերգե Մկրտչյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան
- 10.Մկրտչյան Էմին
- 11.Արմեն Ծառուկյան
- 12.Նարեկ Գրիգորյան
- 13.Արմեն Գրիգորյան
- 14.Վահե Եղիազարյան
- 15.Սարգիս Սուրադյան
- 16.Ղուկաս Հակոբյան
- 17.Դավիթ Մանուկյան
- 18.Գագիկ Ավետիսյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Տ. ՍԱՓԵՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գալի -1, Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 06-Ա

**ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ 02-035-0025-0031
ՕԱԾԿԱԳՐՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ <<ԴԱՇՏԱԴԵՄԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-ԻՆ
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով , հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Թալին համայնքի սեփականություն հանդիսացող 02-035-0025-0031 ծածկագրով 0,1318 հա հողամասը և հողամասի վրա գտնվող 02-035-0025-0031-001 ծածկագրով շինությունը (մանկապարտեզը) անորոշ ժամանակով անհատույց օգտագործման տրամադրել Թալին համայնքի <<Դաշտադեմի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-18

Դեմ-0

Ձեռնպահ-0

- 1.Տավրոս Սափեյան
- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Սևակ Միմոնյան
- 6.Գեղամ Ղազարյան
- 7.Սերգե Մկրտչյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան
- 10.Մկրտչյան Էմին
- 11.Արմեն Ծառուկյան
- 12.Նարեկ Գրիգորյան
- 13.Արմեն Գրիգորյան
- 14.Վահե Եղիազարյան
- 15.Սարգիս Մուրադյան
- 16.Ղուկաս Հակոբյան
- 17.Դավիթ Մանուկյան
- 18.Գագիկ Ավետիսյան



S. ՄԱՓԵՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 07-Ա
ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ԱՃՈՒԴԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի, 57-րդ հոդվածի 2-րդ մասի և 67-րդ հոդվածի, ՀՀ կառավարության 12.04.2001թ. N-286 որոշմամբ հաստատված «Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի տրամադրման կարգ»-ի 5-րդ գլխի և հիշյալ որոշման 3-րդ կետի «ա» ենթակետի պահանջներով, Թալին համայնքի գլխավոր հատակագծին քաղաքաշինական գոտիավորման նախագծին և հողերի օգտագործման սխեմային համապատասխան, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,
Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1.Տալ համաձայնություն Թալին համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն կից հավելվածի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-15

- 1.Տավրոս Սափեյան
- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Սևակ Միմոնյան
- 6.Գեղամ Ղազարյան
- 7.Սերգե Մկրտչյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան
- 10.Մկրտչյան Էմին
- 11.Արմեն Ծառուկյան
- 12.Նարեկ Գրիգորյան
- 13.Արմեն Գրիգորյան
- 14.Վահե Եղիազարյան
- 15.Սարգիս Մուրադյան

Դեմ-1

- 1.Ղուկաս Հակոբյան

Ձեռնպահ-2

- 1.Դավիթ Մանուկյան
- 2.Գագիկ Ավետիսյան



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

S. ՍԱՓԵՅԱՆ

Լ.ոտ	Հողամասի գործառնական նշանակությունը	Գտնվելու վայրը	Ծածկագիրը	Մակերեսը /հա /	Նպատակային նշանակությունը	Շինության ատկայությունը և գինը ՀՀ դրամ	1քմ-ի մեկնարկային գինը /ՀՀ դրամ/
1	Բնակելի կառուցապատման	գ. Ծաղկասար 2-րդ փողոց 23	02-055-0010-0021	0.2866	բնակավայրերի	չկա	170.00
2	Էներգետիկայի	ք. Թային 25 հողամաս	02-003-0224-0645	0.039	Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	չկա	1465.00
3	Բնակելի կառուցապատման	Գ. Մաստարա 11-րդ փողոց 18/1 հողամաս	02-069-0084-0013	0.0408	բնակավայրերի	չկա	260.00
4	Հասարակական կառուցապատման	ք. Թային Ա. Խանջյան փողոց 6/1	02-003-0025-0356	0.00286	բնակավայրերի	չկա	1465.00
5	Բնակելի կառուցապատման	գ. Արագածավան Հոկտեմբերյան խճուղի 2-րդ փակուղի 6/1 հողամաս	02-016-0034-0684	0.0024	բնակավայրերի	չկա	620.00
6	Բնակելի կառուցապատման	գ. Արագածավան Հոկտեմբերյան խճուղի 2-րդ փակուղի 6/2 հողամաս	02-016-0034-0685	0.0024	բնակավայրերի	չկա	620.00
7	Բնակելի կառուցապատման	գ. Արագածավան Պ. Սևակի փողոց 60/5 հողամաս	02-016-0088-0012	0.1015	բնակավայրերի	չկա	620.00
8	Այլ հողատեսք	գ. Արտենի	02-021-0060-0040	0,02225	Գյուղատնտեսական	չկա	36.00
9	Վարելահող	գ. Արտենի	02-021-0281-0004	0,3229	Գյուղատնտեսական	չկա	36.00
10	Վարելահող	գ. Արտենի	02-021-0055-0202	0,3589	Գյուղատնտեսական	չկա	36.00
11	Վարելահող	գ. Արտենի	02-021-0060-0045	0,2965	Գյուղատնտեսական	չկա	36.00
12	Վարելահող	գ. Արտենի	02-021-0060-0044	0,0598	Գյուղատնտեսական	չկա	36.00
13	Վարելահող	գ. Արտենի	02-021-0060-0043	0,03307	Գյուղատնտեսական	չկա	36.00

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ



(Handwritten signature)

ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ. փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 08-Ա

ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՏԱՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 06.02.2024թ. N 2/փ-62 դրական եզրակացությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող 02-069-0330-0021 կադաստրային ծածկագրով 2,2465 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր գործառնական նշանակության հողատեսքից, բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողերի:

2. Թալին համայնքի ղեկավարին՝ <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն, նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16

- 1.Տավրոս Սափեյան
- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Սևակ Միմոնյան
- 6.Գեղամ Ղազարյան
- 7.Սերգե Մկրտչյան
- 8.Ավետիս Մինասյան

Դեմ-0

Ձեռնպահ-2

- 1.Դավիթ Մանուկյան
- 2.Գագիկ Ավետիսյան

- 9. Հարություն Կարապետյան
- 10. Սկրտյան Էմին
- 11. Արմեն Ծառուկյան
- 12. Նարեկ Գրիգորյան
- 13. Արմեն Գրիգորյան
- 14. Վահե Եղիազարյան
- 15. Սարգիս Մուրադյան
- 16. Ղուկաս Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Տ. ՍԱՓԵՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ.փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 09-Ա
ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՍԱՍԵՐԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 26.01.2024թ. N 2/փ-29 դրական եզրակացությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Հաստատել համայնքային սեփականություն հանդիսացող նախկին 02-052-0133-0003 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված, վերածակագրման արդյունքում 02-052-0133-0017 կադաստրային ծածկագիրը ստացած 1,152 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արտավայր հողամասի և քաղաքացու սեփականություն հանդիսացող 02-052-0133-0007 կադաստրային ծածկագրով հողամասից առանձնացված 0,448 հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները՝ գյուղատնտեսական նպատակային նշանակության արտավայր և գյուղատնտեսական նպատակային նշանակության վարելահող գործառնական նշանակության հողերից, ջրային նպատակային նշանակության հողերի:

2. Թալին համայնքի ղեկավարին՝ <<Քաղաքաշինության մասին>> ՀՀ օրենքի 14.3-րդ հոդվածի 30-րդ մասի համաձայն, նշված փոփոխությունը արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում և կատարել հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության պետական գրանցում:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-16

Դեմ-0

Ձեռնպահ-2

1.Տավրոս Մափեյան

1.Դավիթ Մանուկյան

- 2.Բաբկեն Պողոսյան
- 3.Արման Կարապետյան
- 4.Սարգիս Գրիգորյան
- 5.Սևակ Մինոնյան
- 6.Գեղամ Ղազարյան
- 7.Սերգե Մկրտչյան
- 8.Ավետիս Մինասյան
- 9.Հարություն Կարապետյան
- 10.Մկրտչյան Էմին
- 11.Արմեն Ծառուկյան
- 12.Նարեկ Գրիգորյան
- 13.Արմեն Գրիգորյան
- 14.Վահե Եղիազարյան
- 15.Սարգիս Մուրադյան
- 16.Ղուկաս Հակոբյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Տ. ՍԱՓԵՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ. փոստ talinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 10-Ա
2023 ԹՎԱԿԱՆԻՆ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1 կետով,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

- Հաստատել 2023 թվականի ընթացքում Թալին համայնքում իրականացված աշխատանքների մասին հաշվետվությունը համաձայն կից հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14

- Տավրոս Սափեյան
- Բարկեն Պողոսյան
- Արման Կարապետյան
- Սարգիս Գրիգորյան
- Սևակ Սիմոնյան
- Գեղամ Ղազարյան
- Սերգե Մկրտչյան
- Ավետիս Մինասյան
- Հարություն Կարապետյան
- Մկրտչյան Էմին
- Արմեն Ծառուկյան
- Նարեկ Գրիգորյան
- Վահե Եղիազարյան
- Սարգիս Մուրադյան

Դեմ-1

- Ղուկաս Հակոբյան

Ձեռնպահ-3

- Դավիթ Մանուկյան
- Գագիկ Ավետիսյան
- Արմեն Գրիգորյան

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Տ. ՍԱՓԵՅԱՆ



2023 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ.

ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ԸՍՏ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ և ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

Քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների բնագավառ

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն, օրենքով սահմանված կարգով քննության է առնվել քաղաքացիների առաջարկությունները, դիմումներն ու բողոքները, միջոցներ է ձեռնարկվել համապատասխան խնդիրներին լուծումներ տալու համար: Քաղաքացիներին տրամադրվել է համապատասխան փաստաթղթեր և տեղեկանքներ:

2023թ-ի հունվարի 3-ից մինչև դեկտեմբերի 29-ն ընկած ժամանակահատվածում համայնքապետարանում փաստաթղթաշրջանառությունը կազմել է՝

Մտից գրություններ-8808

Ելից գրություններ-4417

Դիմումներ-3518

Համայնքի ղեկավարն իր իրավասության շրջանակներում ընդունել է 2585 իրավական ակտ, որից՝

Որոշումներ-1996

Կարգադրություններ-411

Կայացել է համայնքի ավագանու 12 նիստ

Ավագանու կողմից ընդունվել է 166 որոշում:

Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության բնագավառ

Համայնքի բնակիչների համար ստեղծվել են բավարար պայմաններ՝ տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության մասին իրազեկ լինելու համար և մասնակցելու համայնքի կառավարմանն ու զարգացմանը:

Թալինի համայնքապետարանի պաշտոնականի կայքն է՝ talin.am

Թալինի համայնքապետարանի պաշտոնականի էլեկտրոնային հասցեն է՝

talinihamaynqapetaran@list.ru

Սոցիալական ցանցի էջ՝ [Ֆեյսբուքյան էջ](#), «Թալինի համայնքապետարան»

Թեժ գծի հեռախոսահամարը՝ (+374) 60 75 77 87



Ֆինանսական բնագավառ

Համայնքի 2023թ. բյուջեի եկամուտներն ըստ վարչական և ֆոնդային մասերի

հազար դրամ

1 971 435,1

737 527,7



Վարչական բյուջեի եկամուտներ

Ֆոնդային բյուջեի եկամուտներ

Համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ

N	Եկամուտների անվանումը	Տարեկան պլան	չորրորդ եռամսյակի պլան	Փաստացի	% եռամսյակային պլանի նկատմամբ	% տարեկան պլանի նկատմամբ
1	Անշարժ գույքի հարկ	151200,0	151200,0	128 640,20	85,1	85,1
2	Գույքահարկ փոխադրամիջոցների համար	186800,0	186800,0	193 615,80	103,6	103,6
3	Տեղական տուրք	11150,0	11150,0	13429,6	120,4	120,4
4	Պետական տուրք	5000,0	5000,0	6907	138,1	138,1
5	Հողի և գույքի վարձակալություն	41190,0	41190,0	60924,1	147,9	147,9
6	Վարչական զանգվածներ	63020,0	63020,0	90906,9	144,3	144,3
6,1	այդ թվում աղբահանության վճար	30020,0	30020,0	27909,2	93,0	93,0
7	Մուտքեր տույժերից և նվիրաբերություններից	1200,00	1200,0	950	79,2	79,2
8	Այլ եկամուտներ	20513,9	20513,9	36752,8	179,2	179,2
	Ընդամենը սեփական եկամուտներ	480073,9	480073,9	532126,4	110,8	110,8
9	Դոտացիա	1267337,5	1267337,5	1267337,5	100,0	100,0
10	Այլ դոտացիա			4887,2		
10	Մուբվենցիա /վարչական բյուջին/	2178,8	2178,8	2178,8	100,0	100,0
11	Փոխհատուցում	162906,2	162906,2	162906,2	100,0	100,0
11	Պետության կողմից պատվիրակված լիազորություն	1999,0	1999	1999	100,0	100,0
	Ընդամենը պաշտոնական դրամաշնորհներ	1434421,5	1434421,5	1439308,7	400,0	400,0
	Ընդամենը վարչական բյուջեի եկամուտներ	1914495,4	1914495,4	1971435,1	103,0	103,0
12	Մուբվենցիա /կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով/	511046,4	511046,4	735300,0	143,9	143,9
13	Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ			2227,7		

	Ընդամենը եկամուտներ	2425541,8	2425541,8	2708962,8	111,7	111,7
	ԾԱՆՍԵՐ					
	/տնտեսագիտական դասակարգմամբ/					
N	Ծախսերի անվանումը	Տարեկան պլան	չորրորդ եռամսյակի պլան	Փաստացի	% եռամսյակային պլանով	% տարեկան պլանով
1	Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ	509386,1	509386,1	481073,0	94,4	94,4
2	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	319150,0	319150,0	230912,7	72,4	72,4
2,1	Բանկային ծառայություններ	1000,0	1000,0	293,7	29,4	29,4
2,2	Էներգետիկ ծառայություններ	86000,0	86000,0	71614,8	83,3	83,3
2,3	Կոմունալ ծառայություններ	19700,0	19700,0	13798,9	70,0	70,0
2,4	Կապի ծառայություն	8000,0	8000,0	6732,9	84,2	84,2
2,5	Ապահովագրական ծառայություններ	600,0	600,0	435,0	72,5	72,5
2,6	Գույքի վարձավաճառություն	6000,0	6000,0	4500,0	75,0	75,0
2,7	Գործուղումների գծով ծախսեր	500,0	500,0	384,5	76,9	76,9
2,8	Համակարգչային ծառայություններ	5000,0	5000,0	3132,0	62,6	62,6
2,9	Աշխատակազմի մասնագիտական զարգացման ծառայություններ	1000,0	1000,0	0	0,0	0,0
2,10	Տեղեկատվական ծառայություններ	2000,0	2000,0	1498,2	74,9	74,9
2,11	Կառավարչական ծառայություններ	1500,0	1500,0		0,0	0,0
2,12	Կենցաղային և հանրային սննդի ծառայություններ	3000,0	3000,0	451,4	15,0	15,0
2,13	Ներկայացուցչական ծախսեր	4500,0	4500,0	645,3	14,3	14,3
2,14	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	33420,0	33420,0	19328,8	57,8	57,8
2,15	Մասնագիտական ծառայություններ	17000,0	17000,0	13653,8	80,3	80,3
2,16	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	6000,0	6000,0	650	10,8	10,8
2,17	Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	8000,0	8000,0	4538	56,7	56,7
2,18	Գրասենյակային նյութեր	6000,0	6000,0	4621,3	77,0	77,0
2,19	Տրանսպորտային նյութեր	27130,0	27130,0	24902	91,8	91,8
2,20	Առողջապահական նյութեր	1000,0	1000,0		0,0	0,0
2,21	Կենցաղային և հանրային սննդի նյութեր	19500,0	19500,0	5285,3	27,1	27,1
2,22	Հատուկ նպատակային նյութեր	62300,0	62300,0	54446,8	87,4	87,4
25	Մուքսիդիաներ	664500,0	664500,0	621878,1	93,6	93,6
26	Այլ կապիտալ դրամաշնորհներ	33000,0	33000,0	31304,4	94,9	94,9
27	Մոցիալական օգնություն	25000,0	25000,0	20345	81,4	81,4
28	Այլ ծախսեր	10800,0	10800,0	7890,5	73,1	73,1
28,1	Նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	1000,0	1000,0	590	59,0	59,0
28,2	Հարկեր, պարտադիր վճարներ և տույժեր	9800,0	9800,0	7300,5	74,5	74,5
29	Փոխհատուցում	162906,2	162906,2	162906,2	100,0	100,0
	Պահուստային ֆոնդ	210000	210000,0	209700	99,9	99,9
	ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵՒ ԾԱՆՍԵՐ	1934742,3	1934742,3	1766009,9	91,3	91,3
1	Շենք շինությունների կառուցում	74454,1	74454,1	67455	90,6	90,6
2	Շենք շինությունների կապիտալ վերանորոգում	1273248,7	1273248,7	1035272,7	81,3	81,3

Արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության կազմակերպման բնագավառ

- Համայնքային ենթակայության օբյեկտների անվտանգ աշխատանքն ապահովելու նպատակով իրականացվել է մի շարք միջոցառումներ: Կազմվել է աղետների ռիսկերի նվազեցման պլանը և ճշտվել է արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը:
- ԱԻՆ տարածքային ստորաբաժանման հետ անցկացվել է համատեղ վարժանքներ:
- Գույքագրվել է համայնքում առկա նկուղները և ապաստարանները, իրականացվել է համապատասխան ամրագրում «Օդային տազնապ» ազդանշանի դեպքում բնակչությանը թաքստոցներով ապահովելու համար: Համայնքում տեղադրվել է մեկ նոր շչակ, իսկ մնացած 5 շչակները վերանորոգվել են:

Քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառ

- Համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին համապատասխան՝ օրենսդրությամբ սահմանված կարգով կառուցապատողին տրվել է 116 ճարտարապետահատակագծային առաջադրանք:
- Տրվել է 113 շինարարության թույլտվություն:
- Սահմանված կարգով ձևակերպվել է 16 ավարտված շինարարության շահագործման փաստագրում:
- Սահմանված կարգով վերահսկողություն է իրականացվում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, համայնքի քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների նկատմամբ:
- Իրականացվել է համայնքային սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների, գույքի ամենամյա հաշվառում, գույքագրման փաստաթղթերը ներկայացվել է ավագանու հաստատմանը:
- Հայտարարվել է 16 աճուրդ-վաճառք, որից իրականացվել է 3 շարժական գույքի, 9 անշարժ գույքի աճուրդ-վաճառք, իսկ հայտարարված 4 աճուրդ-վաճառքներին մասնակցության հայտ չի գրանցվել:
- Կատարվել է անշարժ գույքի 720 հասցեավորում:

2023թ. ընթացքում համայնքապետարանի և ՀՀ կառավարության կողմից համայնքներում տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիոն ծրագրով իրականացրել է 780 607 018 ՀՀ դրամի աշխատանք, մասնավորապես՝

1.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԱԳԱԾԱՎԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏՔԵՏՈՆԵ ԾԱԾԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

451 մետր

երկարությամբ 2706 ք.մ մակերեսով 43 313 565 ՀՀ դրամ արժողությամբ

3	Տրանսպորտային սարքավորումներ	36500	36500	27287	74,8	74,8
4	Վարչական սարքավորումներ	33005	33005	27759,1	84,1	84,1
5	Այլ մեքենա սարքավորումներ	65345	65345	38364,1	58,7	58,7
6	Գեոդեզիական քարտեզագրական ծախսեր	500	500		0,0	0,0
7	Ոչ նյութական հիմնական միջոց / ՀՕ ծրագիր/	850	850	823	96,8	96,8
8	Նախագծահետազոտական ծախսեր	84350	84350	13407,1	15,9	15,9
	ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՑԻՆ ԲՑՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐ	1568252,8	1568252,8	1210368	77,2	77,2
9	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-630000	-630000,0	-81272,3	12,9	12,9
	/հողի օտարում/					
		938252,8	938252,8	1129095,7	120,3	120,3
	ԾԱԽՍԵՐ		2662995,1	2685405,6		
/գործառնական դասակարգմամբ ըստ ոլորտների/						
1	Օրենսդիր , գործադիր մարմիններ	770236,1	770236,1	694535,3	90,2	90,2
2	Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	395700,0	395700,0	239227,9	60,5	60,5
3	Քաղաքացիական պաշտպանություն	4500,0	4500,0	243,9	5,4	5,4
4	Գյուղատնտեսություն և ոռոգում	512009,0	512009,0	411809,3	80,4	80,4
5	Ճանապարհային և խողովակաշարային տրանսպորտ	730700,0	730700,0	660602,2	90,4	90,4
6	Աղբահանում	43500,0	43500,0	13360,0	30,7	30,7
7	Ջրամատակարարում	61600,0	61600,0	52939	85,9	85,9
8	Փողոցների լուսավորում	30750,0	30750,0	22961,5	74,7	74,7
9	Կոմունալ ծառայություններ	245000,0	245000,0	244302,1	99,7	99,7
10	Հանգիստ և մշակույթ	167600,0	167600,0	121081,4	72,2	72,2
11	Կրթություն	306400,0	306400,0	285270,3	93,1	93,1
12	Մոցիակական պաշտպանություն	25000,0	25000,0	20345	81,4	81,4
	Ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքեր	-630000	-630000,0	-81272,3	12,9	12,9
	/հողի օտարում/					
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ	2662995,1	2662995,1	2685405,6	100,8	100,8

Պաշտպանության կազմակերպման բնագավառ

- Օրենքով սահմանված կարգով վարվում է համայնքի զինապարտների գրանցամատյանը, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակչության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացվում է տարածքային զինկոմիսարիատ:
- Ռազմական դրության պայմաններում իրականացվել է համապատասխան միջոցառումներ՝ զինկոմիսարիատից տրվող ծանուցագրերը համապատասխան անձանց ծանուցելու համար:

2.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՏԵՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

514 մետր երկարությամբ 3084 ք.մ.մակերեսով 33 391 668 ՀՀ դրամ արժողությամբ

3.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱԿՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

362 մետր երկարությամբ 2172 ք.մ. մակերեսով 35 733 847 ՀՀ դրամ արժողությամբ

4.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՍՏԱՐԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՓՈՂՈՑՆԵՐԻ

ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

1000 մետր երկարությամբ 6000ք.մ մակերեսով 112 675 989 ՀՀ դրամ արժողությամբ

5.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԾԱՂԿԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԲԵՏՈՆԵ ԾԱԾԿԻ ՀԻՄՆԱՆՈՐՈԳՈՒՄ

1713մ մետր երկարությամբ 10 270 ք.մ. մակերեսով 157 492 923 ՀՀ դրամ արժողությամբ

6.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ Ք. ԹԱԼԻՆ ԽՐԻՄՅԱՆ ՓՈՂՈՑ 6-ՐԴ ՆՐԲԱՆՅՔ ԹԻՎ 1 ՀՈՂԱՄԱՍ ՀԱՍՑԵՈՒՄ ՆՈՐ ԳԵՐԱԶՄԱՆԱՏԱՆ ԿԱՌՈՒՑՈՒՄ

4.2 հա մակերեսով, 44 328 004 ՀՀ դրամ արժողությամբ

7.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԱՇՏԱԴԵՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

6842մ երկարությամբ, 220 666 914 ՀՀ դրամ արժողությամբ

8.ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՂՆԻԿ, Ն.ԲԱԶՄԱԲԵՐԴ, ԿԱՔԱՎԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝ ՍԱԼԱՐԿՄԱՄԲ

1860մ երկարությամբ 133 004 110ՀՀ դրամ արժողությամբ

Ըստ բնակավայրերի իրականացված աշխատանքներ՝

Գառնահովիտ

- Փողոցների լայնացման և հարթեցման աշխատանքներ
- Կենդանիների ջրարբիացման 2 համակարգեր բնակավայրից 1կմ հեռավորություններով
- Խմելաջրի բաշխիչ կետերի և ցանցի մասնակի նորոգում
- Շարքից դուրս եկած 25 լեղ լուսարձակների փոխարինում

Կարմրաշեն

- Կառուցման աշխատանքների ավարտական փուլում է գտնվում 120 մ.ք. մակերեսով Արցախյան բոլոր պատերազմներում զոհված կարմրաշենցի հերոսների պատվին հուշահամալիր

Եղնիկ

- Համայնք մասնավոր համագործակցության արդյունքում կառուցվել է 500մ երկարության, դեպի գերզմանատուն տանող ճանապարհի լուսավորության ցանց
- Վերանորոգվել է Խմելաջրի ցանցից 600 մ հատված
- Ընթացքի մեջ է բուժկետի վերանորոգման աշխատանքները

Ակունք

- Փողոցների փոսալցում և հարթեցում՝ 2500մ
- Շարքից դուրս եկած լեդ լամպերի և մալուխների փոխարինում
- Խմելաջրի բաշխիչ կետերի, փականների և ցանցի մասնակի նորգում
- Բուժկետի մուտքի դռան և պատուհանների փոխարինում
- Մանկապարտեզի գազաֆիկացում, ջրամատակարարման և ջեռուցման համակարգի անցկացում, անհրաժեշտ գույքի և տեխնիկայի տրամադրում

Չովասար

- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում 2350մ
- Ջրագծի կառուցում 300 մ
- Վարչական շենքի վերանորոգում
- Շարքից դուրս եկած լեդ լամպերի փոխարինում

Ագարակավան

- Սելաֆատարերի մաքրման աշխատանքներ

Թաթուլ

- Գյուղամիջյան ճանապարհի հարթեցում 700մ
- Խմելաջրի 4 դիտահորի կառուցում
- Վարչական շենքի 30 քմ պատի ապամոնտաժում և նորի կառուցում, դռների պատուհանների փոխարինում և ներքին հարդարում
- Շարքից դուրս եկած 27 լեդ լամպերի փոխարինում

Ցամաքասար

- Հովիվների համար դաշտային տնակի կառուցում
- Կենդանիների ջրարբիացման 2 համակարգ բնակավայրից 3 և 7 կմ հեռավորության վրա
- Հանդիսությունների սրահի համար սանհանգույցի կառուցում
- Վաչական ղեկավարի նստավայրի պատուհանի փոխարինում

Կաթնաղբյուր

- Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
- Շարքից դուրս եկած 90 լեղ լամպերի փոխարինում
- Խմելաջրի բաշխիչ 11 կետի փոխարինում

Սուսեր

- Շարքից դուրս եկած 20 լեղ լամպերի փոխարինում
- Նախակրթարանին գործունեության համար անրժեշտ գույքի ձեռքբերում

Կաքավաձոր

- Խմելաջրի ցանցի ընթացիկ վերանորոգում
- Վարչական շենքի պատուհանների փոխարինում
- «Քարավան և Տագառ» ՄՊԸ-ի կողմից իրականացվել է՝ գերեզմանատան հանգստյան քարի և տարածքի բարեկարգման աշխատանքներ

Մաստարա

- 300մ խմելաջրի ջրագծի անցկացում
- Բուժամբուլատորիայի ջրագծի վերանորոգում
- Կենդանիների ջրարբիացման համակարգի ջրագծի վերանորոգում
- Խմելաջրի ցանցի դիտահորերի վերանորոգում
- Գյուղամիջյան ճանապարհների հարթեցում

Արագածավան

- Արագածավանի թիվ 1 մանկապարտեզի մասնակի վերանորոգում, կցակառույցի կառուցում, գույքի տրամադրում
- Ջրամատակարարման համակարգի դիտահորերի կափարիչների տեղադրում
- Մարզական ակումբի համար, սպորտային վազբուղու և հեծանիվի ձեռք բերում
- Գրիբոեդով փողոցի շենքերի, տանիքների վերանորոգման համար, շինարարական նյութերի տրամադրում
- Աղբամանների տեղադրում
- «Լեվադան» ՄՊԸ-ի կողմից իրականացվել է աղբավայրի մաքրման աշխատանքներ
- Վերանորոգվել է Մենթալ թվաբանության խմբասենյակը

Ոսկեթաս

- Խմելաջրի ցանցից 180 մետր հատվածի փոխարինում
- Կենդանիների ջրարբիացման համակարգի տեղադրում բնակավայրից 5կմ հեռավորության վրա

Գետափ

- Փողոցների բարեկարգում և հարթեցում 570 մետր
- Շարքից դուրս եկած 17 լեղ լամպերի փոխարինում

- 2000թմ տարածքի մաքրում՝ չնախատեսված վայրում թափված շին աղբից Վերին Բազմաբերդ

- Մշակույթի տան 450թմ հատվածի վերանորոգման աշխատանքները դեռ ընթացքի մեջ են

Ներքին Բազմաբերդ

- «Ն.Բազմաբերդի մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի
 - ✓ հյուսիսային պատի դրեժանավորման
 - ✓ ջրագծի հիմնանորոգում
 - ✓ եռաֆազ հոսանքի թույլտվության բարձրացման աշխատանքներ

Վերին Սասնաշեն

- Հանրային սանհանգույցի կառուցում
- Շարքից դուրս եկած 30 լեդ լամպերի փոխարինում

Դավթաշեն

- Խմելաջրի ցանցից 1250 մետր հատվածի կառուցում
- Մանկապարտեզի գազաֆիկացում, ջեռուցման համակարգի տեղադրում

Իրինդ

- Կենդանիների ջրարբիացման համակարգի տեղադրում բնակավայրից 600 մետր հեռավորության վրա
- Շարքից դուրս եկած 30 լեդ լամպերի փոխարինում
- Խմելաջրի ցանցից 250 մետր հատվածի փոխարինում
- Դաշտամիջյան և բնակավայրի ճանապարհների բարեկարգման աշխատանքներ

Զարինջա

- Դաշտամիջյան ճանապարհների մասնակի փոսայցում
- Մշակույթի տան հարակից տարածքում կառուցվող հիշատակի պուրակի ընթացքի մեջ գտնվող աշխատանքներ

Ներքին Սասնաշեն

- Խմելաջրի ցանցից 200 մետր հատվածի փոխարինում
- Ոռոգման համակարգի խողովակաշարի հունի խորացում
- Կոյուղու խողովակաշարերի նորոգում

Աշնակ

- 2.1 կմ փողոցային լուսավորության անցկացում
- Շարքից դուրս եկած 60 լեդ լամպերի փոխարինում

- «Մայրերին նվիրված» հուշարձան կոթողի տարածքի բարեկարգում (հողաթմբի պատրաստում, ցանկապատում, կանաչապատում, ցայտաղբյուրի և նստարանների տեղադրում)
- «Պանթեոն» հուշահամալիրի տարածքի բարեկարգում (լուսավորության անցկացում 70մ, ցանկապատում 60մ)
- «Մեերի դուռ» հուշահամալիրի կառուցում
- Հանդիսությունների սրահի համար անհրաժեշտ գույքի ձեռքբերում
- 550 մետր ճանապարհահատվածի հարթեցում ֆոնդերով ասֆալտով
- Մանկապատեզի համար խոհանոցային գույքի տրամադրում

Պարտիզակ

- Վարչական շենքի հարակից տարածքի պարիսպապատում
- Տարեցների համար նախատեսված խաղասրահի վերանորոգում
- Կառուցվել է խաղահրապարակ Պարտիզակ բնակավայրում

Լուսակն

- Խմելաջրի ցանցից 176 մետր հատվածի փոխարինում
- Կոյուղագծի մասնակի վերանորոգում
- Դաշտամիջյան և բնակավայրի ճանապարհների բարեկարգման աշխատանքներ

Դաշտադեմ

- Ոռոգման ներքին ցանցի կառուցում
- Հանրային սանհանգույցի կառուցում
- Մանկապարտեզի ցանկապատի վերանորոգում

Արտենի

- Դաշտամիջյան և գյուղամիջյան ճանապարհների փոսայցման և հարթեցման աշխատանքներ
- Տարեցների համար նախատեսված խաղասենյակի վերանորոգում
- Մանկապարտեզի շենքի ջրագծերի փոխարինումը նորով
- Մանկապարտեզի ճաշասենյակի վերանորոգում
- Ցայտաղբյուրի ավազանի ներկում
- Արտենի բնակավայրում շարքից դուրս եկած լեդ լամպերի փոխարինում
- Գերեզմանատան լուսավորության համակարգի անցկացում
- Արտենի բնակավայրում շարքից դուրս եկած ջրաչափերի փոխարինում
- Մշակույթի տան այգու նստարանների նորոգում, ներկում
- Մեծ աղբամանների տեղադրում բնակավայրի տարածքում
- Արտենի բնակավայրի կենտրոնական հրապարակի փոքր աղբամանների նորոգում, ներկում և նորերի տեղադրում

Շղարշիկ

- Կենդանիների ջրարբիացման համակարգի տեղադրում բնակավայրից 2կմ հեռավորության վրա
- Մանկապարտեզի համար նախատեսված գույքի ձեռքբերում
- Գրադարանի համար նախատեսված գույքի ձեռքբերում
- Դաշտամիջյան ճանապարհների հարթեցման աշխատանքներ
- Զրուցարանի տանիքի կառուցում

Թալին

- Բազմաբնակարան շենքերի մուտքերի դռների փոխարինում
- Կենտրոնական հրապարակի շատրվանի վերակառուցում
- Կենտրոնական հրապարակի տարածքում 9 նոր նստարանի տեղադրում և լուսավորության լամպերի փոխարինումը նորով
- Ճանապարհների փոսալցման աշխատանքներ
- Համայնքապետարանի շենքի հետնամասի ընթացքի մեջ գտնվող ավտոկայանատեղիի կառուցման աշխատանքներ
- Տերյան 24, 26 և Շահումյան 2, 4 փողոցների հասցներում գտնվող բազմաբնակարան շենքերի բակային հատվածի կոյուղագծերի փոխարինման և ասֆալտապատման աշխատանքներ, որոնք գտնվում են ընթացիկ փուլում
- Բարերար Տիգրան Սաֆարյանի միջոցներով բարեկարգվում է Կենտրոնական այգին, աշխատանքները դեռ ընթացքի մեջ են
- Համայնքապետարանի, «Թալինի համայնքային կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի համար նախատեսված տարածքը և «Թալինի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի տարածքի վերանորոգում և գույքի տրամադրում

Համայնքում կատարված ընդհանուր բնույթի ծրագրեր

- Թալին համայնքի 27 բնակավայրերին ԳՄՀԸ/GIZ ընկերության և Թալինի համայնքապետարանի համաֆինանսավորմամբ տրամադրվել է համակարգչային տեխնիկա
- Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի ՀՏԶ միջոցով, Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրի շրջանակում ՀՀ կառավարության, Համաշխարհային Բանկի և Թալին համայնքի համաֆինանսավորմամբ ձեռք է բերվել գյուղատնտեսական տեխնիկա՝ անվավոր տրակատոր հետևի կցորդով գութան
- «Թալինի համայնքային կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի համար ձեռք է բերվել ձնամաքրիչ սարք
- Թալինի համայնքի բոլոր բնակավայրերին տրամադրվել է աղբամաններ
- Համայնքապետարանը կոմունալ աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու համար ձեռք է բերել ավտոաշտարակ
- Համայնքում տնկվել են տարբեր տեսակների ծառեր, իրականացվել են կանաչապատմանն ուղղված մշտական և հետևողական աշխատանքներ
- Համայնքը ձեռք է բերել ներ 250 մեծ և 100 փոքր աղբամաններ և աղբատար մեքենա
- Վերանորոգվել է Թալին քաղաքի սկզբնամասում գտնվող հուշադրյուրը
- Էլեկտրական շչակների ձեռքբերում և տեղադրում

- Բարերար Տիգրան Սաֆարյանի ջանքերով և Թալինի համայնքապետարանի աջակցությամբ Թալին քաղաքում տեղադրվել է Թալինի մուտքը խոհրդանշող դարպասներ
- Համայնքի համար ձեռք է բերվել էլեկտրական ծառայողական ավտոմեքենա
- Թարմացվել է հետիոտների համար նախատեսված գծանցումները
- Թալինի համայնքապետարանի, «Թալինի համայնքային կոմունալ ծառայություն» ՀՈԱԿ-ի, «Թալինի կենտրոնական մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի, «Թալինի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի համար ձեռք է բերվել անվտանգության տեսանկարահանող սարքեր
- «Թալինի կենտրոնական մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքի տարածքում իրականացվել է հետևյալ աշխատանքները՝
 - ✓ Վարագույների փոխարինում նորով
 - ✓ Մեծահասակների համար նախատեսված խաղարանի վերանորոգում և խաղատեսակների թարմացում
 - ✓ Ձեռք է բերվել նոր պարային տարազներ
 - ✓ Թալինի համայնքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ի ընթերցասրահը, որը գտնվում է Մշակույթի տան ներսում անվանակոչվել է ֆրանսիացի-հայկական գրող Միսաք Մանուշյանի անունով
 - ✓ «Թալինի կենտրոնական մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքի տարածքում բացվել է Երկրորդ Համաշխարհային պատերազմի և Արցախյան պատերազմներում զոհված հեռուներին նվիրված «Փառքի սրահ»
 - ✓ Ապահովվել է Թալին համայնքի ուսանողների անվճար երթևեկը Թալին քաղաքից Երևան և հակառակ ուղղությամբ

ՀՀ կառավարության միջոցներով հիմնանորոգվել է՝

- Ն.Բազմաբերդ Կաքավաձոր միջհամայնքային ճանապարհի 1100մ ասֆալտապատում:
- Ընթացքի մեջ է Արագածավանի, Լուսակնի, Գառնահովիտի դպրոցների կառուցման շինարարական աշխատանքները

Հողօգտագործման բնագավառ

Վերահսկողություն է իրականացվել համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ:

Առևտրի և ծառայությունների բնագավառ

- Տրամադրվել է ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, 267 թույլտվություն:
- Հանրային սննդի կազմակերպման և իրացման 43 թույլտվություն
- Չվարճանքի օբյեկտների ժամը 24.00-ից հետո աշխատելու 1 թույլտվություն

- Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի առքուվաճառքի 2 թույլտվություն
- Հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում վաճառքի 70 թույլտվություն
- Խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի 10 թույլտվություն:
- Թալին համայնքի խորհրդանշանները (զինանշան, անվանում և այլն) որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու 0 թույլտվություն:
- Արտաքին գովազդ տեղադրելու 18 թույլտվություն:

Կրթության, մշակույթի, սպորտի և երիտասարդության ոլորտ

1. Համայնքում վերաբացվել է 2 (Ազարակավան և Դավթաշեն բնակավայրերում) մանկապարտեզ
2. Բացվել է Ակունքի մանկապարտեզը
3. Թալինի մանկապարտեզի մասնաճյուղ է բացվել Սուսեր բնակավայրում, Կաթնաղբյուրի մանկապարտեզի մասնաճյուղեր՝ Շղարշիկում և Եղնիկում
4. Ներկայումս համայնքում գործող բոլոր 13 մանկապարտեզները և դրանց մասնաճյուղերը աշխատելու են նաև ձմռան ամիսներին, ի տարբերություն նախորդ տարիների
5. Համայնքի ենթակայության տակ գտնվող բոլոր մանկապարտեզները համալրվել են գույքով, սարքավորումներով, սպասքով, անհրաժեշտ պարագաներով և բազմաթիվ նոր խաղալիքներով
6. Բարելավվել է մանկապարտեզների սնունդը
7. Ն. Բազմաբերդ, Ազարակավան և Ն. Սասնաշեն բնակավայրերի մանկապարտեզներին տրամադրվել է բարձրորակ տաքացուցիչներ
8. Կաքավաձոր և Պարտիզակ բնակավայրերի երեխաներին տրամադրվել է անվճար փոխադրամիջոց՝ ամեն օր Ն. Բազմաբերդի մանկապարտեզ հաճախելու համար
9. Սեպտեմբեր ամսից սկսած Թալին համայնքում վերաբացվել է 16 մշակույթի տուն
10. Համայնքի միջոցներով բոլոր պարային խմբերի համար ձեռք է բերվել նոր տարազներ
11. Համայնքի այն երիտասարդները, ովքեր հաջողություններ են գրանցել տարբեր հանրապետական կամ միջազգային մրցույթներում, օլիմպիադաներում և մարզական մրցաշարերում, համայնքի ղեկավարն անձամբ հանձնել է պատվոգրեր և նվերներ
12. Կարևորելով կրթությունը և դրա հասանելիությունը Թալին համայնքի երեխաների և պատանիների համար, Թալինի համայնքապետարանի անմիջական ֆինանսավորմամբ, այս տարի Մոսկվայում կայացած Մենթալ թվաբանության միջազգային օլիմպիադային մասնակցել է Արագածավանի բնակիչ՝ 7 ամյա Մարկար Նազարյանը
13. Նշված ժամանակահատվածում համայնքում վերաբացվել է 15 գրադարան և համալրվել է անհրաժեշտ պարագաներով: Գրադարաններում պարբերաբար կազմակերպվում են միջոցառումներ

14. Միանալով Միսաք Մանուշյանի հիշատակի հավերժացմանն ուղղված նախաձեռնությանը՝ «Թալինի համայնքային կենտրոնական գրադարան» ՀՈԱԿ-ի ընթերցասրահը անվանակոչվել է Միսաք Մանուշյանի անվամբ

15. Մարզական գույքով համալրվել է «Թալինի համայնքային մարզական կենտրոնը» ՀՈԱԿ-ը՝ Վերականգնվել է «Թալինի համայնքային մարզական կենտրոն» ՀՈԱԿ-ի խափանված լուսավորությունը, վերանորոգվել են սանհանգույցները, շենքի կոտրված դռները և պատուհանները փոխարինվել են նորերով: Նորոգվել և տեխնիկապես թարմացվել է կաթսայատունը: Բացվել են նոր խմբակներ, կազմակերպվել է ֆուտբոլի մրցաշարեր և ապահովվել է համահայկական խաղերին մարզիկների մասնակցությունը՝ ըստ պատշաճի

16. Պարտիզակույմ գործող կառատեի խմբակին տրամադրվել է անհրաժեշտ գույք՝ մարզումներն անվտանգ անցկացնելու համար

17. «Թալինի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ին տրամադրվել է անհրաժեշտ գույք:

18. Ապահովվել է «Թալինի երաժշտական դպրոց» ՀՈԱԿ-ի և «Թալինի մանկական գեղարվեստի դպրոց» ՀՈԱԿ-ի սաների և այլ ՀՈԱԿ-ների սաների մասնակցությունը տարբեր հանրապետական և միջազգային միջոցառումներին ու փառատոներին

19. Նշվել է Ամանորյա մեծ միջոցառում, համայնքի երեխաները ստացել են նվերներ

20. Մշակութային միջոցառումների շրջանակում ԿՄՍ և երիտասարդության հարցերի բաժինը իրականացրել է «տոների և հիշատակի օրերի» հետ կապված բազմաթիվ միջոցառումներ, ինչպես նաև իրականացվել է «Ֆիդայատուն» միջոցառումը՝ Աշնակ բնակավայրում

21. «Արագածոտնի մշակութային ժառանգությունը» թեմայով գիտաժողով է իրականացվել Վերին Մասնաշեն բնակավայրում

22. Մեծ շուքով նշվել է «Թալինի օրը»՝ Թալին քաղաքում

23. Թալինի Ֆրանկոֆոն կենտրոնը ընդլայնել է աշխատանքները

24. Աջակցություն է ցուցաբերվել համայնքում կազմակերպված միջոցառումներին

(Ագարակավան, Մաստարա, Արագածավան, Աշնակ, Շղարշիկ և այլն):

25. «Թալինի համայնքային մշակութային կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքում բացվել է Հայրենական Մեծ պատերազմի, Արցախյան ազատամարտի, 44 օրյա պատերազմի և դրան հաջորդած ռազմական գործողությունների ընթացքում նահատակված Թալին համայնքի հայորդիների հիշատակը հավերժացնող «Փառքի սրահ»:

26. Թալինի փողոցներից մեկն անվանակոչվել է հերոս Մկրտիչ Հարությունյանի անունով:

27. Կրթամշակութային ՀՈԱԿ-ների շահառուների ընդհանուր թիվը կազմում է՝ 1307, որից

- Երաժշտական դպրոց – 187
- Մշակույթի կենտրոն – 200
- Գեղարվեստի դպրոց – 94
- Մանկապարտեզ – 665
- Մարզադպրոց - 161

Առողջապահության և սոցիալական պաշտպանության բնագավառ

2023թ-ին կատարվել է հետևյալ աշխատանքները՝

1.Սոցիալական աջակցության կարիք ունեցող, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և սոցիալապես անապահով անձանց, ծերերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող անձանց, զոհված, վիրավոր զինծառայողների ընտանիքներին՝ 522 շահառուների, այդ թվում սգո ծախսերի կազմակերպման նպատակով տրամադրվել է 19 780 000 ՀՀ դրամի աջակցություն:

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձանց սեփական դժվարությունները սեփական կարողություններով հաղթահարելու և վերջիններիս մոտիվացնելու նպատակով իրականացվել են բազմաթիվ ծրագրեր՝

- «Օղակ» ՀԿ՝ միտված կանանց հզորացմանը
- «Ազաթ» ՀԿ՝ հաշմանդամություն ունեցող ՎԻՊ կանայք՝ ուղղված հաշմանդամություն ունեցող կանանց և աղջիկների հզորացմանը
- «Արև» բարեգործական կազմակերպություն՝ «Կանանց հզորացումը Հայաստանում» ծրագիր
- «Խոցելի կանանց հզորացումը Հայաստանում» ծրագիր, որի մասնակիցները խոցելի կանայք են, որոնց ամուսինները զոհվել են կամ դարձել հաշմանդամ
- «Աղբյուր» ճամբար Ծաղկաձորում՝ 7-13տ. զոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհագորայինների, ծնողազուրկ ու անապահով բազմազավակ ընտանիքների երեխաների 20-օրյա հանգստի կազմակերպում
- «Սելա» ճամբար Աշտարակի Կարբի գյուղում 7-10տ. երեխաների 5-օրյա հանգստի կազմակերպում

2.Հավաքագրվել են փաստաթղթեր՝ զոհված զինծառայողների ընտանիքների բնակարանների ձեռքբերման համար:

- ✓ Կատարվել է քաղաքացիների հաշվառում, ովքեր դիմել են բնակարանային պայմանների բարելավման համար:

3.Թային համայնքի ղեկավարի միջնորդությամբ առողջապահության ոլորտում՝ պետպատվերի շրջանակներում կատարվել են 34 քաղաքացիների վիրահատական և այլ միջամտություններ:

- ✓ Կատարվել է բոլոր ԲՄԿ-ներում շրջայցեր,կազմել են անհատական մշտադիտարկման արձանագրություններ:

4.Թայինի համայնքապետարանի Խնամակալության և Հոգաբարձության մարմնին կից գործող Խնամակալության և Հոգաբարձության հանձնաժողովը 2023թ.-ին կայացրել է 22 որոշում՝

- 1.Բնակության վայրի սահմանում-6
- 2.Տեսակցության կարգի սահմանում-7
- 3.Հոգաբարձու նշանակելու վերաբերյալ որոշում-2
- 4.Անվան փոփոխություն-1

5. Ճանաչել անգործունակ -1

6. Երեխաների ինամքի կենտրոն տեղափոխում-3

7. Մոտղական իրավունքների սահմանափակում-1

8. Մոտղական իրավունքների զրկում-1

9. Ընտանիքի հետ վերամիավորում-1

5. Արցախից տաղահանված 120 ընտանիքիների հաշվառում, տնայցեր թվով 455 անձանց տարատեսակ աջակցություններ՝ համայնքի, անհատ բարերարների, ՄԱԿ-ի, ՆԳՆ-Ի, Դիակոնիայի, Արմավիրի զարգացման կենտրոնի, Համահայկական հիմնադրամի կողմից:

- ✓ Հայաստանի Տարածքային Չարգացման հիմնադրամի կողմից 2020թ.-ի ԼՂ-ից տեղահանված թալին համայնքում բնակություն հաստատած ընտանիքների ստվել է կենցաղային տոխնիկա, կահույք և այլն:

Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի կողմից կատարված աշխատանքները

1. Ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն ֆերմերային տնտեսություններին զարնանացանի և աշնանացանի աշխատանքների կազմակերպման գործում: Կազմակերպվել է հանդիպումներ գյուղացիական տնտեսությունների և սերմացուների, պարարտանյութերի մատակարարների հետ
2. Գյուղատնտեսության և բնապահպանության բաժինը համակարգել է «ՀՀ-ում աշնանացան ցորենի արտադրության խթանման պետական աջակցության» ծրագրի աշխատանքները համայնքում, ինչպես նաև իրականացրել է համատարած մոնիթորինգ
3. Արոտավայրերի և համայնքային սեփականություն հանդիսացող վարելահողերի վարձակալության պայմանագրերի ձևակերպում
4. Բարձր կադաստրային արժեք ունեցող հողատեսքը ավելի ցածր կադաստրային արժեք ունեցող հողատեսքի փոխադրման իրականացում
5. Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեին ներկայացվել է ամսական և տարեկան վիճակագրական հաշվետվություններ՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքերի և համախառն բերքի վերաբերյալ
6. ՀՀ Արագածոտնի մարզպետարանին ներկայացվել է թալին համայնքում 2023 թվականի ցանքատարածության և բերքահավաքի ընթացքի վերաբերյալ օպերատիվ տվյալներ
7. Քաղաքացիներին տեղեկանքների տրամադրում
8. Ընդերքօգտագործման պայմանագրերի ձևակերպում, նոտարական վավերացում
9. Ավագանու նիստի աշխատանքներին վերաբերող փաստաթղթերի նախապատրաստում

10. Համայնքի գյուղական տնտեսություններին մատուցվել է անասնաբուժական ծառայություններ

11. Ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն «Գյուղատնտեսության ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի աշխատակիցներին գյուղատնտեսական կենդանիների հաշվառման համարակալման, պետական պատվիրակված մյուս ծառայությունների իրականացման աշխատանքներին

Համայնքում պարբերաբար իրականացվել է անասնահակահամաճարակային իրավիճակի մոնիթորինգ և վերահսկողություն

12. Կազմակերպվել է հանդիպումներ՝ գյուղական տնտեսությունների հետ և ներկայացվել է «ՀՀ-ում փոքր և միջին խելացի անասնաշենքերի կառուցման և վերակառուցման և դրանց տեխնոլոգիական ապահովման աջակցության» ծրագրի մասին տեղեկություններ:

13. Գյուղական տնտեսություններին ներկայացվել է նաև ՀՀ-ում գյուղատնտեսության ոլորտի պետական աջակցության այլ ծրագրերի մասին տեղեկություն

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՔ



ԱՎԵՏԻՔ ԱՎԵՏԻՍՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ԹԱԼԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի
Թալինի համայնքապետարան, Գայի -1. Հեռ. 060-75-77-87
Էլ. փոստ ralinihamaynqapetaran@list.ru

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

<<28>> փետրվարի 2024 թվական N 11-Ա
ԹԱԼԻՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի, 11-րդ հոդվածի, 13-րդ հոդվածի 10-րդ մասի դրույթներով և հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը,

Թալին համայնքի ավագանին որոշում է՝

1. Թալին համայնքի 2024թ-ի բյուջեում նախատեսել 20 մլն դրամ գումար՝ 2024թ-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով:

2. Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական և առողջապահական ոլորտները սահմանել որպես առաջնահերթություն:

3. Համայնքի ղեկավարին՝

